ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2023 թվականի ապրիլի 4-7-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1.Անունը, ազգանունը՝

Ժաննա Զաքարյան

2.Զբաղեցրած պաշտոնները՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թվականի ապրիլի 4-7-ը

4.Հրավիրող կողմը՝

Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողով

5.Գործուղման նպատակը՝

ԵՏՀ խորհրդի 20.06.2012թ. N 48 որոշմամբ սահմանված ընթացակարգերի ապահովումն է:

Հայաստանի Հանրապետության կողմից մշակվող «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի հանրային քննարկման արդյունքներով նախագծի, կից փաստաթղթերի և ամփոփաթերթի վերաբերյալ աշխատանքային խմբի անդամների հետ քննարկում՝ ընդհանուր մոտեցումների փոխհամաձայնություն, աշխատանքային խմբի անդամների կողմից ներկայացված առաջարկությունների և դիտողությունների ընդհանրացում և քննարկում, ինչպես նաև նախագծի համար հետագա ընթացքի ապահովման վերաբերյալ որոշման կայացում:

6.Քննարկված թեմաները

Աշխատանքային խմբի խորհրդակցության ընթացքում քննարկվեցին «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագծի ընդհանուր դրույթների, կիրարկումն ապահովող ստանդարտների ցանկերի, ստանդարտների մշակման ծրագրի, ԱՏԳ ԱԱ ծածկագրերի ցանկի, տեխնիկական կանոնակարգի օբյեկտ հանդիսացող արտադրանքի, համապատասխանության գնահատման, մակնշման, վերահսկողության շրջանակի վերաբերյալ հարցերը, ընդհանուր մոտեցումներն ու կարգավորումները:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Աշխատանքային խմբի խորհրդակցության ընթացքում ելույթ ունեցան աշխատանքային խմբի ղեկավար՝ որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետը, հայկական կողմի աշխատանքային խմբի անդամները, Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման դեպարտամենտի ներկայացուցիչները (աշխատանքային խմբի անդամներ), Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների աշխատանքային խմբի անդամները, առողջապահության ոլորտի, գործարար միջավայրի և ոլորտային մասնագետները: Խորհրդակցության շրջանակներում քննարկվեցին փաստաթղթի կարգավորումները, սկզբունքային և ընդհանրական մոտեցում պահանջող հարցերը՝ ըստ անհրաժեշտության նախագծում կատարելով նաև բովանդակային փոփոխություններ:

Քննարկումների արդյունքում՝ ԵՏՀ խորհրդի 20.06.2012թ. N 48 որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան որոշվեց որպես տվյալ տեխնիկական կանոնակարգը մշակող մարմին հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը կազմել տվյալ խորհրդակցության արձանագրությունը, լրամշակել, ամփոփել «Նիկոտին պարունակող արտադրանքի մասին տեխնիկական կանոնակարգ» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգի նախագիծը, դրա վերաբերյալ ստացված հատուկ կարծիքների հետ միասին փաթեթը ներկայացնել Եվրասիական Տնտեսական Միության Հանձնաժողովին:

Գործուղման արդյունքում ձեռքբերված պայմանավորվածությունների և որոշումների մասին տեղեկատվությունը ներկայացվեց նախարարության ղեկավարությանը և աշխատակիցներին:

8.Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ժաննա Զաքարյան

10.04.2023թ.